ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

«09» 05 2017թ.

N: _____

ՈՒՂԵՐՁ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հաղթանակի և խաղաղության 72 և Շուշիի ազատագրման 25 ամյակների կապակցությամբ:

Մեծ հայրենականի ավարտն աննախադեպ իրադարձություն էր ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ՝ հայ ժողովրդի կյանքում:

Պատերազմի առաջին իսկ օրերից մեր ժողովրդի շուրջ վեց հարյուր հազար զավակներ մասնակցեցին այդ անհավասար պայքարին: Ցավոք, նրանց ուղիղ կեսը չվերադարձավ ու չտեսավ բաղձալի հաղթանակը, բայց հայ ժողովուրդը մարդկության դեմ ուղղված այդ պատերազմում փառքով պսակեց իր անունը:

Այսօր մեզ համար կրկնակի տոն է. մենք նշում ենք ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 72 և Շուշիի ազատագրման 25 ամյակները: Իրենց նախորդների արժանավոր ժառանգները Շուշիի ազատագրմամբ նոր իմաստ ու շունչ հաղորդեցին մայիսի 9-ին, որը մեր պապերի, հայրերի և որդիների պատմական հաղթանակների միասնական տոնն է, ինչպես նաև հայրենիքի խաղաղ վերածննդի գրավականը:

Մենք գլուխ ենք խոնարհում այն բոլոր նահատակների շիրիմների առջև, ովքեր իրենց կյանքը չխնայեցին հայրենիքի ազատության համար:

Մեր փառապանծ տոների՝ Հաղթանակի և խաղաղության 72 և Շուշիի ազատագրման 25 ամյակների կապակցությամբ կրկին շնորհավորում եմ բոլորիս և հատկապես Մեծ Հայրենականի և Արցախյան ազատամարտի վետերաններին, ցանկանում նրանց քաջառողջություն, տոնական բարձր տրամադրություն և խաղաղ երկինք՝ սահմանները պահպանող մեր զինծառայողներին:

Ամենաջերմ բարեմաղթանքներով՝

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ